ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Սեպտեմբերի 10-ին. Թիֆլիս. №37

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Лит. С. Быхова

Թուրքիայում երիտասարդ Թուրքերի հռչակած սահմանադրութիւնը գոյութիւն ունի։
Թուրքահայաստանում հայերի գլխին շողշողում է սուրը... եւ մահ տարածում...

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր ընտանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիկիդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԵԳԻՆՆԵՐ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով։

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑԸ

1911 ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 օր

10

Суббота ՇԱԲԱԹ Շաբաթ

Լուսնի 28

11 (կիր.) Տօն ամենայն սուրբոց. աշունքն սկսէ և ի մէջ թատրոնաց սելի-բիլիութեան ժամանակն գայցէ։

12 (բ. շ.) Մեռելոց—եթէ լաւ եղանակ իցէ երիտասարդք և կուսք կրկին ի Խոջիվանս վազեսցին և անդ աչք ու բնքով խօսեսցին։

13 (գ. շ.) Տարեդարձ Յոհաննեան զպրոցի ուսուցչական մարմնի որոշման, որ վասն ուղղագրութեան և որ քիչ ժամանակէ անց՝ ոտի տակ է տուեալ զորոշումն այն ձեռամբ քաջամարտիկ և քաջալազուխ Ստեփանի Մալխասեան։

14 (դ. շ.) Տօն ամենայն երկրեր աշակերտ ընթերցողաց գրադարանի հայոց բարեգործականի, որք գան և գսելի և գրելի անեն միմեանց և գերկրորդ դասարանէն նշանուեն։

15 (ե. շ.) Յիշատակ յօբելեանի գրատան Գուտեմբերգի, որ պիտ կատարուէր, բայց չկատարուեց ի պատճառս դայմութեան Գալստի Գալստեան։

16 (հնգ.) Տօն սրբոցն անսուրբից, որք կերան-խմեն, կրեցան և մեռանց ծեծգցին. իսկ ուրիշներք մեղաւորեցան։

Տոնաբերեալ և օրացոյցապետ

Պղրոսիոս արք-վարդապետ.



Պ. Ա. ՍՏՈՂԼԳԻՆ

(ՄԻՆԻՍՏՐԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

ԻՄ ԳԸՐԳԵՐԸ. ԻՄ ՑԱՒԵՐԸ

III

—Իմացել ե՞ս, կօսէ, Գասպար աղա Թագա Թագա խաբարնիր, կօսէ, հէնց վուր ռաստ էկաւ հարցրեց ինձ միր պարուն Դէօ-Ղէօն։

—Վա՛, անգձնիր ունիմ ու, ինչի՞ չպտիմ իմանայ։

—Տեհա՞ր ինչիր է էլի, կօսէ։

—Ձաեհայ, համա իմացայ. ասի։

—Ի՞նչիս, փիքր անում աշխարքի բանիրը վո՞ւնց կուլի, կօսէ։

—Վունց վուր պտի ըլի՝ էնէնց էլ կուլի. ասի։

—Էտ խօ էտէնց է, կօսէ։

—Էտէնց էլ պտի ըլի. մա՜շ. ասի։

Մէ մէ մարթ՝ էս միր Դէօ-Ղէօյի հանգի հարցումներ վուր չի տալի՞—ինքս ինձ ասում իմ

էրնէկ սրանց, վուր դարդ չունին։

Հալբաթ ճակտին էտէնց էր գրած...

էս խօսքիրը մինձ գրքի էն։ լաւ տեղիցն իմ դուս գրի։

—Ստալըպինն էլ մեռաւ, կօսէ։

—Աստուձ հօքին լուսաւորէ, ասի։

—Համա տեհնում ի՞ս՝ ինչ մինձ մարթ էր, ասէ։

—Ծիէ, մինձ կուլէր բա ի՞նչ. հէր օրհնածի վուրթի՝ Դէօ-Ղէօ. ասի, Ստոլըպինը վուր մինձ էր, էտ էնդուրեմէն է, վուր մինձ օջախի վուրթի էր։

—Բաս, Վերիշչագին նախըշքարը, բաս պօէտ Պուշկինը, բաս լուսահօքի Տոլստոյը։

—Դրանք էլ մինձ մարթիք ին էլի. ասի, ու մինձ մինձ օջախի էլ վուրթիք. ասի։

—Օջախի վուրթութինը վունչինչ, կօսէ, մէ Մաքսիմէ Գորկի կայ, կօսէ, իսկի օջախ էլ չէ տեհի, կօսէ, մէ Անդրով Լևանդ կայ, կօսէ,—նա էլ էտ թաւուր օքմին է, կօսէ, համա էսօր անում ունէ, էսօր աշխրքի տօլ մարթիք ին, կօսէ, ու էս ինչեմէն է, կօսէ։

—Հացեմէն ու ջրեմէն. հաէրն էլ (օդն էլ) իր զօրութինը ունէ, ասի։

—Վո՞ւնց, կօսէ. էլի հարց ուից իմ բարեգամ Դէօ-Ղէօն։

Հէյ գիդի հա՜ ժամանակ. մէ վուխտ կէր, էս միր Դէօ-Ղէօն, վուր ջեհիլ էր, Թագա նշնած, գիդի՞ս թէ ձէթխախիը էն տարին էժան էր, հաւատա Հալաբըի կամրջով վուր անց ինք կենում էն դանձիլի հուտը, վունց վուր Բալլէի ու Բրոկարի մաղազինէքում անուշ հոտ է կաղնած՝ էնթաւուր բուրմունք էր տալի։

Էտ ինչի. ջո՞նջիլը, ջո՞նջոլը գրանքէն իրիք չուրս կապէկ էր, շիրբախտըն էլ խօմ էժան էր ու էժան, համ էլ թաւանկար,—թաւանկար ու հեստի խատակ, վունց վուր Թագա ծնուած անմիդ էրէխէն. բաս չէ ու հիմի է լա՞ւը, այ գիդինը մանեն, հիմիկւայ ղալբ ու փալշիւ ապրանք ծախողնիրը, ՚իղի մէջ աստւմ ին գադ մադ ին խառնում, կօսէ, ու գրւանքէն իրիք աբասով ծախում, կօսէ, գինու փալշիւթինն է. խօմ իմացի՞լ էք. էն օրը մի ջեհիլ տեհայ, գագրանիցում գինիգործութին իմ սովրի, կօսէ։

—Վո՞ւնց ասի. գինին վո՞ւնց պտիս գործի ասի։

—Իս լաւ գինիք կանամ շինի, կօսէ, հեստի գինիք, վուր՝ վուր բերնիդ ջուրը գնայ, կօսէ։

—Անմախացնո՞ւմ իս, ասի, լաւ գինին մէնակ Կախէթն է շինում ասի։

—Ձէ, եանղլիշ իս, կօսէ, դիղերով հեստի գինիք շինիմ, վուր խելքդ գընայ, կօսէ։

Աբա ինչ ասէի, իս էս ջեհելին—դեղերով էլ գինիք ին շինում՝ ու լաւ է, կօսէ. աբա էդ փալշիւթինը լաւ է՞լ լաւ չէ իս ու իմ հօքին, համա ինչ. աշխարքը էտէնց է. հիմի փալշիւթինը ափրո մօդա է ու խօդումն էլ է. ա՜յ փալշիւ մարթի ասածն ափրո գին ունէ, փալշիւ գործիչն էլ լաւ անում ունէ։

Մա՜շ։

Հա, էն էի ասում, Դէօ-Ղէօն ու իս փիքր էինք անում։

—Ի՞նչի, կօսէ, միր ասկումը էտ ուրիշ ասկերի թաւուր մինձ մինձ մարթիք չկան, ասմէ։

—Ի՞նչի չկան. ասի, միգնում էլ պակասնիրը չին ասի. ա՜յ ջէր, իս՝ ասի, իս ինչո՞վ իմ պակաս ու ո՞ւմիցն իմ պակաս ասի. աբա ինձ էլ մինիստր արէք ու տեհէք թէ ի՞նչիր իմ անում ու ինչ Թագա Թագա պլան ու զակոննիր իմ մօգոնում, ասի. իս դէնը մընամ, բաս միր Մակար Զըմշկովը՝ Տոլստովից ինչով է պակաս, ասի, բաս միր Խաչատուր Բաբաեանը. Պուշկինից ի՞փ է ետ կաղնած, ասի, բաս միր Գարեգին Լևոնեանը ան Գարեգին Երիցովը ինչով ին Վերեշչագինից փիս ասի, միր էփրիմ էպիսկուպոզը ով ասեց թէ անշնուք է, ան Գիգա Խատիսովը, խիլքի կոլոփ չէ՞. է՝ իս ու իմ հօքին։

—Մաշ ինչի անումնիրը մինձ չէ, կօսէ։

—Էտ էլ իր միգէզը ունի ասի, հային՝ իփ վուր էրեխայ է ծնում, իլաքի էս քառասուն իցուն վերջին տարին՝ մէ գլուխ էն է փիքր անում, վուր վուրթին տիրացութին անէ, վուր վուրթին ժամաշապիկ հաքնէ ու էդու համա էլ հօրն ու մօր բերնի ջուրը գնում է, ՚իփ վուր տղէն էգեղեցում մօտ է բռնում գրակալի մօտ ան մեռիլ թաղելիս՝ մինձ մինձ կերոններով մըդըպ Մէլքոնի, ան քաչալ Տիգրանի խմբում ու ջարգում գնում է ասի, էդու համա էլ դուրթ է՝ մինձ մինձ մինիստրիք՝ Ստոլըպինի թաւուր, մինձ մինձ գրողնիր, փիքր անողնիր Տոլստովի թաւուր, մինձ մինձ պօէտնիր՝ Պուշկինի թաւուր չունինք, համա մինձ մինձ տիրացունիր ունինք ասի։

—Մաշ միր պօէտնիրը, միր գրողնիրը միր... դրանք տիրացունիր ի՞ն։

—Թէ վուր լաւ ին՝ դիախ էտէնց ին ասի. ինչ է էս սհաթիս ասի, միր ասկի ցանկութինը, մինք իփ ինք մատծում վուր մինիստրնիր ծնինք, փիլիսոփանիր ունենանք, պօէտնիրը շատացնինք. միր ամենալաւ փիլիսոփոզը՝ Սեդրակ Թառայովն է, նա էլ իրա հանգի է, միր ամենալաւ պօէտը—հիմի ո՞վ հայերէմէն պօէտ չէ՞. աբա մէ հայ շանց տուր, վուր իր կինքումը՝ համ տիրացութին արած չլինի, համ էլ վոտանաւորներ գրած չլէ։

—Ղուրթ իս հրամանք անում, կօսէ։

—Իս իփ իմ եանղլիշ ասի, ասի՝ վուր հիմի ասիմ, ասի, ու էլի դոշաղ վուր հիմի էլ էսթաւուր ինք ասի։

Տնաքանդ հայիրը բերնի համ էլ վուր ունի՞ն՝ Ստոլըպինը մինձ ու խիլօք մարթ էր, կօսէ։

Խիլօք էր բաս ի՞նչ. իս գիդիմ նրա հէրն էլ իր վուրթուն Վանքի շկօլ կու ղրգէր ան Ճեմարան--վուր միր բանաստեղծ հրապարակախօսների փոխասացութինը լսէր ու սովրէր։

Իս գիդիմ Վերէշչագինն էլ միր նախըշքարներու թաւուր հինդ մանէթով հաւեց շկօլումը դասեր կուտար. իս գիդիմ Պուշկինը, Գորկին, Անդրեևն էլ միր բանաստեղծների հանգի մէ գլուխ «սար ու ձոր, տէրտէրի փոր կու գրէին»։

Իս գիդիմ Տոլստոյն էլ՝ միր փիլիսոփողներու հանգի ուրիշից բանիր կու դողնար—ու կու փեչատէր։

Մաշ արա՞։

Իս գիդիմ... իս, վուր մէկը ասիմ, իս վուր մէկը գրիմ, իս, վուր ջուրը նընգնիմ—աբա ձեզ իմ հարցնում, հ՞ը։

Խաթաբալա ամենայն հաոց

Գասպար աղա Կալաթուզով

ԿԱԹՈՂԻԿՈՍ. ԸՆՏ. ԽՆԴԻՐ

—Սրբազան, տեսնում է՞ք, էլ առաջուայ նման շատերը չեն հետաքրքրվում կաթողիկոսական հարցով։

—Դէ էտէնց էլ պիտի լինէր, սիրելիս. առաջ կարծում էին թէ մենք միլիոններ ենք ուտում. ուզում էին, որ իրանք էլ մասնակից լինեն. հիմա տեսան որ հազարներ էլ չկան. մի քիչ դրաղ են քաշւել։



—Ցարդելի տիկին կամ օրիորդ, ես ուսուցիչ եմ, բայց տեղ չեմ կարողանում գտնել. պահանջում են, որ կամ ամուսին ունենամ և կամ քոյր՝ ուսուցչուհի. դրանցից ոչ մինը չունեմ, ուստի ձեր ձեռքն եմ խնդրում։

—Իմ-իմ. շատ շնորհակալ եմ, ազնիւ հերոս, մեծ ուրախութեամբ, թէև կեանքումս ուսուցիչ չեմ եղած, բայց ձեր խաթրու պատրաստ եմ։

ԵԿԱԻ

—Եկա՞ւ։

—Հա եկաւ. ասում է լաւ-լաւ կաւալէրներ էր գտել, ուստի և ուշացել էր. սուս, կամաց չզարթնի, մեռը է։

—Էհ պարոն Կարապետ, շատոնց է չէր էրևում, ետղուզ—բէքէփ խօմ չէ՞ք:

—Ի՞հ, բէքէփ կի չէ, մէ քէփ. էս պառաւութինիս փուխար խս էլ գնացիլ էի գաչա:

—Վա, ղո՞ւրթ, վ՞ուրդի:

—Ղուրթ, մաշ, ղուրթ, ողորմած կենայ Մանդլիս:

—Մանդլի՞ս. իժում էս վ՞ունց էլաւ, էնդի խօմ պօլէտիկուրի բանիր չէիր մոզոնում:

—Վունց չէ, կինադամ սիրահարեցայ. պօլէտիկուրի բան չէ՞ սա:

—Վ՞ունց է, վ՞ունց:

—Էլ վունց ախպէր. իմացիլ էին, վ՝ուր մէ էրկու թուման թաղմելա ունիմ, ով տաեխ էս միր ուսում արած աղչիկնէրից՝ գըլխիս պտուտ էին գալի:

—Վա՛, ղուրթ խս հրամանք անո՞ւմ:

—Բու արևը գիղենայ, քունը, սուտ չգիդենաս, իմ հոքին վկայ:

—Վա՛, իժում. իժում ո՞նց գլուխդ փաթերակեմէն ազատեցի՞ր:

—Ասում էի՝ ամօթ է, ասում էի, ես ստարիկ, ասում էի, մաեա բոլշէ նի մոժէմ խաղլիդ, ասում էի, ու նրանք էլ ինչ էին ջուղաբ տալի՞ է. մուժ տակոյ նուժնա, կօսէ, վուր դոմ սիդիլա, կօսէ, ա մի րաբօտայմ, կօսէ:

—Վա՜, վա՜, ղուրթ, ղո՞ւրթ:

—Մենակ էս, բէխերս բռնում էին, խաբուշ, կօսէ:

—Իժում ի՞նչ արիր:

—Իփ վուր դիվիր էկայ քաղաք, գնացի օխնած ջրով բէխերս լւացի, հիմի փառք Աստծու ձլիւ խառակեցի:



* * *

Արշալոյսին իմ երեսին էն սև աչքի բոցն ընկաւ.
Նորա խաղից, նորա շողից սիրտս մի խոր ցաւ ընկաւ.
Ասի՝ «աղջի, դուր մի՛ փախչի, թող քեզ մի կո՛ւշտ համբուրեմ.
«Դու իմ փէրին, ես քո գերին—թող քո կրծքին լո՛ւռ մարեմ...»

Նա մայլեց. տխուր աչքերն ինձ բարկացած նայեցին.
Սրտիս լարերն էն սև՛ աչքի բոց հայեացքը պահեցին:
Ու ձըգւում են և թրթռում նուրբ լարերը իմ սրտի,
Մինչև այսօր պինդ պահում են հուր հայեացքը սև աչքի...

Ա. Խոնդկարեան

ԷՆՑԻԿԼՕՊԷԴԻԸ

(Տե՛ս Ա.—Է. տառերը)

Ը.

Ը տառը հայերէն այբբենի ութերորդ տառն է և հայ ազգի թագն ու պարծանքը, որից զուրկ են օտար լեզուների այբուբեններ:

Այնքան մեծ է այդ տառի զօրութիւնը, որ սուրբ Մեսրոպի հօգարարձութեանը այսքան ժամանակ քնացրել է:

Դա իր ծնւած օրից միշտ օգնութեան է հասնում նեղն ընկածներին:

Այսպէս—աշակերտին՝ քննութեան ժամանակ, գերասարին՝ գիրը չիմացած դէպքում, քահանային՝ յաւուր պատշաճի նշանակած տեղը որոնելիս և այլն և այլն և այլն:

—

Ընտրութիւն.—Դա մի չարագուշակ բառ է, որ պտտւում է հայերի գլխին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ և փաթթւում վրացիների վզովը Թիֆլիսի քաղաքի ձայնաւորներ ընտրելիս:

Ընկեր.—Շարաթաթերթ է, որին յանձնել է ազգը լեզուն յարթելու և քերականութիւնն ուղղելու գործը: Առ այժմ սկսել է ո-ից և յ-ից: Ո-ի պաշտօնը յանձնել է օ-ին, իսկ խեղճ յ-ի ոտքիկի մի մասը կտրելով, պաշտօնը կրճատել է և արգելել է այսուհետև բառերի վերջում երևալ, չըհայած որ ո-ն և յ-ն միացած գոռում են.—ո՜յ, դա քո իրաւունքից դուրս է:

Ընտանի.—Կոչւում են տներումն ապրող ոտւնները և անասունները: Սակայն դրանց մէջ պատահում են և վայրենիներ: Օրինակ, անտառից բերած արջի քոթոթը կամ թէ «Закавказье» թերթի խմբագիրը, որ նոր կլուբում ծեծել է իշխան Ամիրաջիբուն:

Ըռեխ.—Դրաբար է և ասում են այնպիսի բերանին, որը ղար[illegible] պարփակում է ընտիր տեսակի հայհոյանքներ:

Ընկնել.—Սա երկու կերպ է գործածւում «գետին ընկնել» կամ «ճանկն ընկնել»: Երկրորդն առաջինից աւելի թունդ է. օրինակ եթէ մէկն ընկնում է ուպրավայի ծառայողների ճանկը, Աստւած հեռու տանի, մինչև որ պլոկւած հաւ չդառնայ, չի ազատւի:

Ընդունարան. — Կոչւում են այնպիսի տեղերը, որտեղ ընդունում են պատիւ տալու համար: Ինչպէս օրինակ Հաջի Զէյնալ Թաղիէվը իր ընդունարանում ընդունեց երիտասարդ խնդիրներին, և ինչպէս յայտնի է լրագրներից, մի լաւ «պատիւ» ուեց:

Ընդունակութիւն. — Այնպիսի յատկութիւն է, որ շնորհւած է շատ քչերին: Ինչպէս օրինակ հայ ուսանողը գրադարանում, իսկ խմբագիրը—խմբագրատանը ընդունակ են հեշտութեամբ մկրատ բանեցնել:

Էնցիկլօպեդիստ

Փարեմուզ

«ՋԱՆ ԳԻԼԻՄԻ»

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Մայն լիբէ կանատու զագեն. .
Ջան Ֆլօրա, ջան, ջան...
Վարում դու մուցտ զըոկլէնտրագէն.
Ջան Բլիւմէ, ջան ջան...
Կեօնիկ մայի վիրտկամէն յէուտէ,
Ջան Ֆլօրա, ջան ջան...
Ունդ իխ մուցէ իստ իխգէլօէտէ
Ջան Բլիւմէ, ջան ջան...
Ալես նէխմախ դեր մայի
Ջան Ֆլօրա, ջան ջան...
Մախտի զէլէ Փրից ունդՖրէի
Ջան Բլիւմէ, ջան ջան...
Լաստ տաս աուզ կոմտինատս
Ջան Ֆլօրա, ջան ջան...
Վինդէտ էինէն շտրատս մրատս
Ջան Բլիւմէ, ջան ջան...

Յովսէփ Պօրիծիեանց

ՅՐԱՄՅԵՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԱՖՅՈՏԻԿՈՆ ԴՊՐՈՑՈՒՄ

—

—Բարև, պարոն տեսուչ։

—Ցարգանքներս, ինչով կարող եմ ծառայել։

—Բանը, գիտէք, ինչումն է. խիստ հակում ունենալով դէպի արտիստական կարիերը, ես ցանկանում եմ, հնարաւորութեան չափ, ձայնս մշակել ձեզ մօտ։

—Շատ ուրախ եմ. կարելի է։

—Պէտք է խոստովանեմ ձեզ, որ բոլոր ինձ ճանաչողները, որոնք լսել են իմ երգեցողութիւնը, ասում են, որ ես ձայն չունիմ։

—Թքեցէք, պարոնս, այդպէս ասողի երեսին, որը այդ բանը ասում է ձեզ։ Ամէն մարդ էլ ձայն ունի։ Այդ ակսիոմա է։ Հարկաւոր է միայն, որ այդ ձայնը մշակւի մի երաժշտական կրթութիւն ստացած, գեղարուեստի էութիւնը հասկացող մարդու ձեռքի տակ, այնպիսի մի մարդի, ինչպիսին, օրինակ—ես եմ։

—Պէտք է ձեզ ասեմ, պ. տեսուչ, որ սկզբում ես մտադրութիւն ունէի կոնսերւատորիա մտնելու...

—Ի զո՞ւր, բոլորովին իզո՞ւր... Կոնսերւատորիայում դուք պիտի մնաք շուրջ հինգ տարի և այնպէս ոչինչ էլ չէք սովորի, այն դէպքում, երբ իմ դպրոցում...

—Բայց, ինձ մինչև անգամ կոնսերւատորիա չընդունեցին. փորձեցին ձայնս և յայտնեցին, որ ես անպէտք եմ։

—Ահա, տեսնում էք։ Իսկ ինձ մօտ դուք դասընթացը վերջացնելուց յետոյ վկայագիր կստանաք, որը ձեզ իրաւունք կտայ օպերաներում երգել, իմարկէ, այդ այն դէպքում, երբ դուք հրաւէր կստանաք։

—Իսկ եթէ չստանամ։

—Ցիմարութիւն է, անպայման կստանաք։ Մի մարդ իմ դասընթացը աւարտի և հրաւէր չստանա՞յ... Ահա օրինակը ձեր առջև է. անցեալ ձմեռ իմ երկու աշակերտը և մի աշակերտուհին երգում էին օպերայում։ Ես ինքս ներկայ էի նրանց աղմկալի յաջողութեանը։ Բացի այդ, գարնանը. իմ աշակերտներից մօտաւորապէս 10 հոգի դերիւտ ունեցան օպերայում։

—Եւ նրանց խմբի կազմի մէջ ընդունեցին։

—Ոչ մէկին չընդունեցին։ Բայց այդ էլ, պարոնս, հին արտիստների ինտրիգների պատճառով. նրանք վախում են, թէ երիտասարդ ոյժերը կըսպանեն իրենց, իրանց թարմ և շնորհալի ձայնով։

—Այդպէս, ուրեմն, դուք ենթադրում էք, որ ժամանակով ես կարող եմ օպերային երգիչ դառնալ։

—Գլուխս կըտամ։ Բացի այդ, գիտէք, ձեր դէմքն էլ այնպէս է, գեղեցիկ. Ճիշտ օպերային... Օ՜, ձեզանից դուրս կը գայ մի շատ լաւ օպերային խտրի դեկավար...

—Այդ դէպքում՝ ես համաձայն եմ ձեր դպրոցը մտնել...

—Շատ ուրախ եմ... Համեցէք... Թոյլ տուէք ստանալ...

ԴԵԿԵՆ

—Իկրիկիկո—Գարշս գուն էլ էստի։

—Օղչում ջան, վունց իս. իս էլ էստի։

—Տօ էս տարի անդորձ իմ մնացի։

—Ախմախ իս ռւ. զնայիր Ուսուցչական Միութիւնում մէ մանէթ տայիր, իժում էլ մի քանի միութեան չլէնների հիդ քէֆ անէիր, վերջն էլ գլխիդ մի քոթան ան սի վեդրս անէիր, ձեռիդ մէ գրաւէքայ գրքիր ու մէկ էլ մէ ջոխի վերցնէիր. տեհնէիր տեղ կունէնայիր թէ չէ։

—Իլաքի թէ էրկու շուշի կառ էլ աշքերիս շինէի, չէ ախպէր, իս հալալ հաց ուտող եմ. չիմ կանայ։

ՖԵԼԻԵՏՕՆ

— ԼԻԶԸ ԳԻԼ ՋԻՕԿՕՆԴԸ —

Երբ ես թերթերից տեղեկացայ որ Լուվրի թանգարանից արիստոկրատ գողերը թոցրել են Իտալիայի վերածնութեան դարի անմահներից մէկի՝ Լեոնարդո դա՝ Վինչիի «Ջիոկոնդա»-ն, որը իր ժամանակին Ֆրանսիայի Ֆրանչիսկ թագաւորը գնել էր 45 հազարով և ներկայումս էլ Փարիզի «Journal»-ը 50 հազար մրցանակ է որոշել գտնողին, զարմանքից բերանս բաց մնաց։

Եթէ մի գեղեցիկ ֆլորենցուհու պատկեր սակ գտնելու համար որոշած է այդպիսի մի ահագին գումար, պարզ է որ պատկերը կրկնակի պիտի արժենայ ժամանակակից գեղագէտների համար, իսկ եթէ հէնց ինքը Լիզա դել Ջիոկոնդան ներկայումս կենդանի լինէր, թերևս մի ամբողջ պետութեան գնով Մահմէդ Ալիի հարեմի նախանձելի կարգը կազմէր, կամ աշխարհային ֆէտիշը դառնար ինչպէս Կաւալերին։

Բայց այդ պատկերը ես գնահատում եմ ոչ աւելի քան երկու հազար։ Նախ հայտվարի շրջանակի գեղեցկութիւնը երևակայելով, ես այն գնահատում եմ շատ շատ 25 ր. ընտիր կտաւը իր подрамка-յով 10 ր. աշքի առաջ ունենալով Լեոնարդոյի չորս տարուայ աշխատանքը այդ պատկերի վրայ, բոլոր այն չորս թեականները նահանջ տարիներ հաշուելով և օրական մի ռուբլի աշխատավարձ տալով նկարչին, ստանում եմ 1464 ր. որը կտաւ ու շրջանակի արժողութեան հետ ի մի, կազմում է 1499 ր.։

Մի 501 ր. էլ իրան նկարչին մախսրկայի ու արադի փող եմ տալիս (որովհետև մեծ տաղանդները միշտ հարբեցողներ են լինում, ինչպէս օրինակ — Խաշմանեան, Վրոյր, Լաշքարեան, Գօլիցին և այլք) մի խօսքով ընդամենը ստանում եմ 2 հազար ռուբլի։

Ուրեմն էլ ինչու համար Journal-ը մի այդպիսի հակայական գումար է զոհաբերում յանուն այդ գեղեցիկ կնոջ պատկերի։

Իրը հնութիւն.

Բայց հնութիւններ մենք հայերս էլ ունենք, որոնք խիստ սիրելով հանդերձ տեղն ընկած ժամանակ 14 շահի էլ չենք տալիս։ Մթթէ հնութիւններ չէին Նաղաշ Յովնաթանի նկարներն ու օրնամեանները ս. Էջմիածնում որ մեր молодець—կաթողիկոսներից մէկը ջնջել ու սւարել տւեց։

Ի՞նչու.

Գուցէ մեր հնութիւնները հայեացք շոյող բան չեն ներկայացնում իրանցից, ինչպէս Ջիոկոնդան։

Տարօրինակ է ճշմարիտ. կարծես հողեղէն չի եղել այդ կինը։

Այդպիսի հողեղէններ մենք էլ շատ ունենք. (պատկերների մասին չեմ խօսում այլ կենդանի արարածների). նրանք էլ գեղեցիկ են ինչպէս Ջիոկոնդան. շէն կենայ Кавказское Аптекарское Товарищество-ն թէև տանը Սաթայելի պէս մարդ են վախեցնում իրանց մուութով, բայց դուրսը սովորաբար գեղեցիկ են ու անուշիկ ինչպէս շուշանն ու խրիզանտեմը, կակաչն ու նարդոսը (մեր Պայքարագիր Նար-Դոսը չկարծէք)։

Ինչ վերաբերում է հնութեան, այս խիշածներն էլ հին են — Թեմուրագնց Տէր-Թօմի կնքածներ, Տէր-Ղէորգի կնունքի ժամանակ զայրա նաղարով պարեկածներ էրածներ, տարած ու յետ բերածներ...

Ուրիշ բան է Լեոնարդոյի միւս նկարը «Ջինևրա Բէնցի»-ն այն գոնէ կոյս աղջկա պատկեր է, ինչ էլ որ չլինի աւելի արժէ մեր ներկայ լուսաւորութեան, և միևնոյն ժամանակ բարքերի այլանդակութեան պարսկական սիրոյ, անասնութեան ու ցինիզմի դարում, իսկ Ջիոկոնդան ամուսնացած մի տիկին է եղել, որպիսիները մեզանում խուրմի գին ունին։

Մի այլ Թերթում կարդացի թէ իբր ամերիկացի միլիարդեաներից մի գեղասէր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ԼՈՐԻ

Լորի է լորի
Սպիտակ լորի,
—Այստեղ ու այնտեղ,
Թափված ամեն տեղ։

Լորի է ընդուշ
—Տիկնոջ մատներում,
Լորին է անփուշ
—Օրիորդների ձեռքում,

Եւ պառաւ տատի,
—Անսէր վարպետի,
«Հայ վարժապետի»,
Եւ դերասանի,
Եւ վիպասանի,
Եւ կաղ թաբախչու,
Եւ կեանքը վարձու
Մարդոց առաջին։

Եւ նա շտմ է,
—Լորին շարժում է
Անիսօս թղթերի—խաւաքարթերի
Բազմութեան վրայ,
Եւ ահ, աչքաբաց
Լորին զգում է,
Լորին փքում է,
Լորին տքնում է,
Լորին զղջում է
Եւ քրտնքում է...

Բայց, «բաւական է»,
Կանչում է յանկարծ
Մէկը բարկացած
Եւ ջղայնացած.—
«Իմ լորին տարաւ»,
Այ դու անիրաւ...

Եւ իսկոյն ժիտոր, խենթ իրարանցում,
Եւ провѣрка, եւ գոռում գոչում.
Թէ ողջը ապշած, շուած աչքերով
Մէկին են դիտում, ինչ որ մրթմրթում,
Կամ խոր ահ բաշում։

Բայց վաղանցուկ է
—Կեանքում հիացում
Եւ իրարանցում։

Անցաւ մի վայրկեան,
Օ՜, կրկին անյայտ,
Լորին իր դերում,
Շարժւում է շարժւում.
Եւ ահ ո՞վ գիտէ,
Մի նոր ու անյայտ,
Աւէր յաղթանակ,
Լորին նրանցից
Ումն է պատրաստում,
Կամ որին մերժում։

Լորի է լորի...
Սպիտակ լորի
Այստեղ ու այնտեղ,
Մարդը ամեն տեղ,
«Օ մարդը անշեղ»։

Խեճ

ԹՂԹԱԽԱՂԻ ՄԻԶՈՑԻՆ

—Պարոն Սիմէօն. այդ դուք ոչնչի նման չէք։ Այդպէս չի կարելի գնալ։ Չէ՞ որ մենք բարկի չենք խաղում։ Ի՞նչի համար մենք տուգանք գրինք։ Դուք պէտք է առաջ խաղաք տուզ-տրեֆը, իսկ յետոյ արդէն կոզերնաները։ Պէտք է ձեւական էլ լինել, որ այդքան պարզ խաղը, այդքան սխալ կերպով խաղալ։

—Շնորհակալ եմ ձեր պատուի համար, որը արիք դուք, հաշելով ինձ ձեր հեռաւոր բարեկամների թւում։

Դեկամ

խմբակցութիւն, նպատակ ունենալով իլել Եւրոպայի աշխարհահռչակ գեղագործները, դիմել է գողութեան ստոր միջոցին։

Ես չեմ հաւատում։ Թէև ճիշտ է, վերջ ի վերջոյ Ամերիկան պիտի յաղթանակէ Եւրոպային և ամբողջ աշխարհը պիտի Ամերիկայանայ—ինչպէս գուշակեց դեռ 1902 թ. սկզբներին Ստենդը իր տաղանդաւոր «The Americanisation of The World» գրքով ու ազդեց ողջ Եւրոպան։ Բայց չեմ հաւատում թէ՝ նոր-երկրացիները կարող են գողութեամբ առաջ տանեն հոսող իրաւացի կապրիզը։ Նրանք հօ [illegible] խօսներ կամ հիւսիս-հարաւ [illegible] դէս ու դէն երերուող [illegible] նրանք հօ իրանց անուանի [illegible] մէկին—մամենտի միակ հսկային տաղաչարար հայհոյողներ ու միւսի թանկարժէք թուղթունամանով հրապուրողներ չեն?

Որտեղ Ստէղը, որտեղ «Մշակի» Համբարձումը, «Հորիզոնի» «քիթը», կամ հէնց ես նաւատ. որտեղ փիլիսոփա Ինկրոլը, որտեղ փիլիսոփա Թառայեան Սեդրակը. որտեղ Տաֆտը, որտեղ Սաղաթէլեանը...

Չէ. ամերիկացիք հօ հայ երեսփոխներ չեն որ ծածուկ վերցնել գիտենան։

Պահ. 50 հազար, մունջ ու անշունչ մի կտաւի համար... մինչ այդ գումարի 1|8 մասով միայն, ես Պորտուգալիայի ex-թագաւոր Մանուելից իր գեղեցկուհի Աղէլ-Անէֆին կըխլէի և մի վազօն էլ Շան թաղից հին ղեղիներ կուղարկէի Ամերիկա, որոնք իրանց բերնի սիտորով ու քթներից ծորող шоколадный շիթերով ողջ Նիւ-Եօրկը կըհոտացնէին։

Վաշ անտէր փողեր։

Մենք ամբողջ հոգով նուիրուած լինելով գրչին ու մայրենի գրին, տարեկան 50 հազար հատ կէս կոպէկանոց էլ չենք ստանում։

Խեղճ Բաշինջաղեանը եթէ 50 հազար տարի ապրի, իր ամբողջ կեանքի ու գործունէութեան ընթացքում դուցէ այդպիսի գումար երբէք էլ աչքով չտեսնի, ի հարկէ հայերից։ Նա ամբողջ Դարեալի կիրճը, Սեւանայ ծովը, Ալազանի հովիտը, Արարատը, Ալագեօզը, ով է իմանում քանի-քանի միլիօնաւոր դեսեատին հողեր, տեղեր ու անտառներ. լուսին ու աստղեր... բոլորը, բոլորը 30—50 բուբլիով զիջում է հայ հարբստին, որը գնելով դեռ մեծ՝ շռայլութիւն է համարում իր կողմից։

Արխիվի նկարիչ պառաւ Մագինեանը եկեղեցու համար մի ասպետ է նկարում նժոյգը տակին, մզրախը ձեռքին... մանէթ ու կիսով, տակը մակագրելով ս. Գէորգ (կարծես մի քանի անգամ տեսած լինի նրան ու հետը իխտիլաթ արած), տեղն եկած ժամանակն էլ ս. Գէորգ ջնջում ու շինում է ս. Սարգիս. ս. Կիրակոս... և... այդ ողորմելին այդպիսի գումար իսկի թղթի վրայ գրած էլ չի տեսել։

Տիեզերահռչակ գեղեցկուհի—դերասանուհի ...նիւի պատկերը Վանքի գաւթում ծախւում է հատը մի կոպէկով։

Տէր-Գիւտի գունատիպ Լուսաւորիչները, ինչ պակաս հնութիւններ են, որոնց կոյտերը թափած էին судебный пристав-ի մօտ և իբրև կալբաս փաթաթելու թղթեր, ոչ ոք մէկին 70 կոպէկ էլ չեր տալիս։

Աշխարհիկ կեանքի համար ախ քաշող մեր երիտասարդ վարդապետները дюжин-ը մի բուբլիով այնպիսի փարիզեան կօկոտների կարտեր են գնում, որ նայելիս կըծում են իրենց երբէք չհամբուրուած շուրթերը, քիչ է մնում շաշանան, քիչ է մնում հրաժեշտ տան իրանց սրեմ ու վեղարին...

Ահ մի երազիս մէջ տեսնել կարողանայի այդ զարմանալի Լիզա գէլ Ջիոկոնդային, թէ ինչ տեսակ ջանավար է դա, որ ֆրանսիական թերթերին այնքան է զբաղեցրել—որքան Օրմանեանիզմը մեր թերթերին։

Մարիկ

ՔԱՂԱՔԱԿԻՑՆԵՐ

(Դորձադուրիւն տրաւայի մէջ)

—

—Պարսիկներին անպայման շահ է հարկաւոր, որպէսզի նրանց մէջ եղած բոլոր խառնակութիւնները վերացուին...

—Սուտ ես խօսում։ Նրանց միայն մէջլիսն էլ բաւական է։

—Իսկ ես ասում եմ—շահ։

—Ո՛չ—մէջլիս։

—Մի վիճի, յիմար—գլուխ։

—Իսկ դու ինքդ ինչու ես դուրս տալիս։

—Պարոններ, տոմսակ վերցրէք... Եւ ձեզ էլ մի քիչ քաղաքավարի պահէք. այստեղ հասարակութեան միջ...

—Ի՞նչ... հասարակութիւն... Թքել եմ այդպիսի հասարակութեան վրայ, որ չի թողնում լուրջ քաղաքական զրոյցով զբաղուել։

—Կամաց, պարոն... Տոմսակ վերցրէք։

—Կարելի է։ Տուր երկուսը մինչև Երևանեան հրապարակ... Դու Գարեգին, միջազգային քաղաքականութեան մասին ոչինչ գաղափար չունես... Դու ինքդ քննիր. եթէ շահը իր գահի վրայ է, նշանակում է պարսիկներին մի կատարեալ և կանոնաւոր իշխող ունին և բացի այդ, միացած իշխանութիւն։

—Էլի իշխանութիւն...

—Խեղճ պարսիկներին կենդանի կենդանի հողի մէջ թաղել...

—Ինչու համար հողում։

—Ի հարկ է... Կամ թէ չէ թնդանօթի բերանը կըկապեն և կըզցեն...

—Թնդանօթի...

—Այո, այդպիսի պատիժ կայ Պարսկաստանում...

—Ահա, ինչպիսի կենդանատանջներ են, անիծածները։ Բայց յամենայն դէպս՝ ես մտածում եմ, որ շահը այդտեղ ոչ մի մեղք չունի։ Գլխաւորապէս այդտեղ, այդ սարդարներն ու Արշադներն են գործում։

—Նրանք հօ առանց հրամանի չեն գործում։

—Կարող է, որ շահը ինքը չգիտի այդ բոլորը։ Բայց մէջլիսը չի կարող չիմանալ, որովհետև ժողովուրդը նրան տեսանելի է. մէկը ասում է, միւսները համաձայնւում են։

—Դու մէջլիսին ձեռք մի տուր. այդ ժողովրդական հիմնարկութիւն է և ողջ Պարսկաստանի փառքը։

—Ի՞՞նչ...

—Ասում եմ՝ ժողովրդական, կարելի է ասել՝ և սուրբ հիմնարկութիւն...

—Ահա թէ ինչ... Գարեգին, մի պղտորիր իմ հոգին... Չեմ կարող ես այդպիսի խեղաթիւրական խօսքեր տանել... Լռիր...

—Չեմ լռի... Մէջլիսը—այդ մի այնպիսի...

—Լռիր, սատանայի խարուկ...

—Այդպիսի ժողովրդական հիմնարկու...

—Հը՞. չես ուզում լռել։ Ըս...տացիր...

Զիկ, շրխկ, լսւում է տրամւայի վագոնի մէջ երկու ուժեղ ապտակի ձայն։

—Ա՛յ այ, կոնդուկտոր, կոնդուկտոր...

—Իջէք, պարոններ... Քաղաքապահ, վագոնի մէջ սկանդալ են սարքել առանց պատճառի...

—Ես քեզ մէջլիս ցոյց կըտամ...

—Սպասիր, ես սկզբից չըհասկացայ... Մէջլիսի համար ես էլ չեմ կարող համբերել... Այդպէս էլ-պէտք է...

Ծեծւած և չծեծւած «քաղաքացիները» վեր են բերւում վագոնից և քաղաքապանների հսկողութեամբ տարւում են ոստիկանատուն։

—Ն.

ՊԷՏՔ Է ՄՏԱԾԵԼ

—Տեսնում ես, որդեակ, նկատեց մօրաքոյրը ազգականուհուն,—երբ մանդու են գնում, հարկաւոր է երկու անգամ մտածել, համաձայն առածի. երկու անգամ օրինակ...

—Է՜հ, մօրքոյր, արտասանեց օրիորդը,—դու ինքդ էլ երկու անգամ մտածել ես...

—Այո, սիրելիս, ես կրկնակի անգամ եմ մտածել, բայց երկրորդ անգամը ուշ, երբ արդէն ամուսնացած էի։

Դեկամ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՍԻԱԾ է յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԲՐՕՇԻՒՐ

ՄԱՐԻԿ

«ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ԼԻԱՆ»

Գանողին խնդրում են թողնել «Խաթաբալա»-ի խմբագրատանը, գոհացուցիչ վարձատրութեամբ։ 10—7

ՎԱՀՐԱՄ ԵՐԱԶԵԱՆ

Ֆրանսերէնի դասատու, շրջանաւարտ Frère-ների ուսումնարանից

ԲԱՆԵՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԿՕՆԿՈՒՐՍԻ ՄԷՋ

մրցանակեալ, տալիս է ՖՐԱՆՍԵՐԷՆԻ մասնաւոր դասեր.

Դիմել ժամը 12—2-ը. Սապէօրնայա փող. տ. № 26, բնակարան Գ. Լեոնեանի 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԿԱԼԻՑԻՈՍԿՕՊ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) ԹԱՄԱՇԵԱՆԻ ՔԷՐԻՆՍԸՐԸՆ (Նատ.)
2) ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԻՏ (Նատակներ)
3) ԿԵՑՑԻ՜ ՄԱՅՐԸ... (Նատակներ)
4) ՔՐԻՍՏՈՍ ՅԵՐԵԼԻ ԹԱԼԻԿՈ ՋԸ՜Ն...

ԳԻՆՆ Է 8 ԿՊԿ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում. 10—9

Խմբագրատանը

—Զարմանում եմ, թէ ինչպէս էք համարձակւում այսչափ սխալներով լի յօդւածը ուղարկել տպագրութեան։

—Ինչու, ինչ կայ որ։

—Ինչպէս թէ՝ ինչ կայ, եղբայր, բա ձեզ համար կէտադրութիւն՝ ստորակէտ, վերջակէտ նշանակութիւն չունի։

—Չէ, իսկի էլ չէ. ստորակէտ, վերջակէտի վերաբերեալ նոյն իսկ հեռագրատանն էլ փող չեն վերցնում ու...

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Ժիվոպիսեց Մ. Յովհաննիսեան, որ Պետերբուրգից սկսած եղել է համարեա Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում և լաւ ծանօթ է վիվեսկաներ պատրաստելու գործին, այժմ Թիֆլիսի կենտրոնում բացել է արհեստանոց, ուր ընդունւում է միմիայն

ՎԻՎԵՍԿԱՆԵՐ

ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՊԱՏԻՎԵՐՆԵՐ

(Спеціалистъ вывѣсокъ)

Վիվեսկաները պատրաստւում են շատ շքեղ, ամենավերջին ոճով, անհամեմատ արժան, քան միւս բոլոր արհեստանոցներում և յանձնւում է խոստացած ժամանակին։ Բացի այդ, բոլոր պատուիրողներին, իրենց պատուէրի դէմ համաձայն տալում է մի սիրուն իլուանիկ նկար շքեղ շրջանակի մէջ իբրեւ արէմիա։

Ցանկացողներին խնդրում եմ այցելել և համոզուել։

Ցաղանօր՝ Մ. Յովհաննիսեան

Հասցէն՝ Михайловскій пр. № 74

0—34

Փողոցում

—Ինչու համար, սիրելիս, դու աշխատանքով չես զբաղւում, այլ ողորմութիւն ես խնդրում։

—Իսկ դուք, պարոն, ողորմութիւն խնդրել էք։

—Ո՛չ։

—Կնշանակի, դուք չգիտէք, ինչ է աշխատանքը։

Սուլտան գիւղի հայոց դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Մի ուսուցիչ և մի վարժուհի։ Դիմել Յովհ. Մալխասեանին երեկ. 7—8 ժամ. Полицейская ул. № 26. 3—1

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԸ

—Ոստիկան, դու գոնէ մի ճար արա—ասա որտեղ բնակարան գտնեմ. ամբողջ շաբաթ շրջում ենք բնակարան չենք գտնում։
—Ինչ անեմ, պարոն—որևէ յանցանք գործեցէք, ձեզ՝ բանտ կուղարկենք, բնակարան կունենաք։

—Կարելի է ձեր այն բնակարանը տեսնել, որ վարձով է տրւում։
—Կարելի է, բայց երեխաներ ունէ՞ք։
—Այո, ի հարկէ, երեխաներ ունեմ։
—Ներողութիւն... չէ չունենք. բնակարանը վարձւած է։

Տրամվայում

—Լսեցէք, դուք իմ ոտքի վրայ էք նստել։

—Ներողութիւն, ես մինչև այս կիսակայանն եմ գնում, շուտով կիջնեմ։

—

—Պարոններ, համբարդներ։ Կօնդուկտօր...

—Ի՞նչ է ձեզ հարկաւոր։

—Ինձ դուրս բերէք այս բեռների կապոցների և չեմոդանների միջից, որոնցով պատել են ինձ... Ես այստեղ իջնելու եմ։

—

—Կատեա, ինչու դու բոլորին ասում ես, որ քո դիմացի տեղը բռնուած է, քանի որ նա ազատ է։

—Հապա ինչ, բանւոր ու կօշտոտ շորերով մարդիկ ուզում են նստել այդտեղ... ինչու համար, քանի որ մի մաքուր երիտասարդ կարող է նստել։

Դ—մ.

МАГАЗИНЪ

КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскiи пассажъ № 8

громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочее.
ИНѢЕТТЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ
Остерегайтесь поддѣлокъ и подражаній
Просимъ обратится только Пушкинскій пассажъ **№ 8.**

15—2 (օ. մ.) М. А. КАЛТАКЯНЪ

Դժւարութիւն

Երիտասարդ կինը գալիս է ծանօթ բժշկի մօտ, որը իրենց տանն է լինում երբեմն։

—Ա՛հ, բժիշկ ես ձեզ մօտ եմ եկել։

—Ինչով եմ կարող ծառայել, տիկ. Աննա։

—Աղաչում եմ ձեզ, բժիշկ, տասցէք ամուսնուս, որ ինձ անհրաժեշտ է երկու շաբթով Բաթում ուղևորել։ Մտածեցէք մի որևէ հիւանդութիւն և ասացէք նրան։

—Չեմ կարող։

—Ինչո՞ւ։

—Երեկոյեան ակումբում, ես ձեր ամուսնուն խօսք տւի, որ այսուհետև ձեզանում հիւանդութիւն չգտնեմ, և ուրիշ տեղեր գնալու մասին խօսելիս յայտնեմ ձեզ, որ այդ տեղը ոչ մի օգուտ չի բերի։

„ԽԱԹԱԲԱԼԱ“-ի և „ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ“ խմբագրութիւնը տեղափոխուած է Դվարցովայա փողոց, տուն Սարաջևի, վրաց ազնուականների (նախկին Արծրունու) քարվանսարայի դիմաց։

АТРПЕТЪ

1. **Мамед-Али-Шах**
Народное движеніе въ Персіи **ЦѢНА 1 РУБ.**

2. **Рахим-Хан**
Смуты въ Персіи **Цѣна 20 коп.**

3. **ИМАМАТЪ,** государственный строй и религіозное воззрѣніе въ Персіи, **цѣна 1 руб.**

4. **БАБИТЫ и БЕХАИТЫ**
Новое религіозное теченіе и ученіе въ Персіи цѣна 60 коп.

Во всѣхъ книжныхъ магазинахъ. *00—18*

ՊԱՍՏԱՌՆԵՐ ОБОИ

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՑՒԱԾ Է

Ե. Ց. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԴԷՊՕՑՈՒՄ

որտեղ և վաճառւում է գործարանային գներով։

Թիֆլիս Դվորցովայա փողոց։ 50—35

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ“
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ
ГОЛУБКА 10 шт. 3 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ԿԱՆԱՆՑ

ՊՐՈՖԵՍԻՕՆԱԼԻ ՆՈՐ ԴՊՐՈՑ

„ԻԴԵԱԼ“

Կար ու ձևի և ամեն տեսակ գեղեցիկ ձեռագործների

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ընդունելութեան պայմանները շատ նպաստաւոր են բոլոր դասակարգերի համար

ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ՁՐԻ

Պարապմունքները սկսւելու են օգոստոսի 27-ից. հասցէն՝ Уголь Елизаветинскій и Реутовскій. *10—1*

Первокл. ресторанъ „АННОНА“



„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** ергО оѳеггэпѣвицъ—г-жи Сакко и Марія Оландезе и баритона Дж участіемъ ндезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ

„АННОНѢ“ 52—20

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

Դիմեմ է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և գիտում են գումարով գնողները։

ԲԻՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՋՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, գով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—20

Ի-ԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿՍԱՆ

ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍԻԱՑ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՑ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բեցէպտ կերակուրների, խմիչքների, թխուածքների, կոմպոտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն։ 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2ր 60 կ.։ Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային հաւեղ ու սննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելուածով, մօտ 100 երես, նկարներով։ Գինը 1 ռ. 20 կ., երկու գիրքը միասին 3 ռ. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով դիմել բացառապէս Я. бургск. рсу, С.-Петербургъ, Петер-К. Петесторона, Большой просп. № 56—609, 483 0—19 (Ե. հ. շ.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ԶՐԿԱՆ ԱՅԼԵՒՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, արիպէրով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է օնանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միզասեռական օրգաններիի», նկարներով և բաղմաթիւ բէցէպտներով մօտ 250 երես։ Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ.։ «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամէն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ.։ Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով)։ Միակ պահեստը С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петерсъ 484 (Ե. հ. շ.) 0—19

40 օր! ԶՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

սոր ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերադիր վճարով արժէ 1 ր. 10 պ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—Մ 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.։ Պատէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար։ С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерсъ. 482 00—19

Типографія «Культура» Баронская 14. Խմբ.-հրատարակիչ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆ. ՄԱՐՈԿԿԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՒ

—Ի՞ն, անշնորք, թմբկահարել էլ չես կարողանում—այն ինչ՝ մենք պէտք է տիրենք եւ Մարոկ-կոյին եւ Փրանսիային—ի՞ն—յիմար։

—Միշտ այդպէ՛ս է, ձերդ գերազանցութիւն։